



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՄԻՍԱԾՅԱՆ

«16» 02 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 10

Ձեռնարկողը՝

<<Ավշար ջուր>> ՍՊԸ

ՀՀ Արարատի մարզ, Ավշար գ. Թ. Գրիգորյան 5

Գործունեությունը

**<<Արարատ>> ածխաթթվային հանքային ջրերի
հանքավայրի թիվ 11 և 12 հորատանցքերից հանքային
ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

<< Արարատի մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝**



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 10

«16» 02 2018թ.

ՀՀ Արարատի մարզի «Արարատ» ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 11 և 12 հորատանցքներից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ «Ավշար ջուր» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝ «Ա»
Տեղադրման վայրը՝ ՀՀ Արարատի մարզ

Արարատի մարզի Վեդու «Արարատ» ածխաթթվային ջրերի հանքավայրի արդյունահանման նախագիծը կատարվել է «ԱՎՇԱՐ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Վեդու հանքային ջրերի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արարատի մարզում և տեղակայված է 2.5-3.0կմ հյուսիս-արևելք Վեդի քաղաքից՝ «Բորոտաղբյուր» կիրճում:

Մոտակա բնակավայրերն են քաղաքներ Արարատը, Վեդին և Վանաշեն, Դաշտաքար, Գոռավան, Ավշար գյուղերը:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C): Տարեկան միջին ջերմաստիճանը +16°C է:

Վեդու «Արարատ» ածխաթթվային ջրերի հանքավայրի հաշվեկշռային պաշարները հաստատվել են ՊՊՀ-ի կողմից 16 նոյեմբերի 1973 թվականին A+B կարգերով և կազմել են 8.39 լ/վրկ կամ 0.725 հազ. մ³/օր, այդ թվում A կարգով՝ 7.15 լ/վրկ կամ 0.618 հազ. մ³/օր, B կարգով՝ 1.24 լ/վրկ կամ 0.107 հազ. մ³/օր: Պաշարները հաշվարկվել են 3 հորատանցքերով՝ 11, 12 և 19: Ըստ հորատանցքերի պաշարները կազմել են.

| Հորատանցքի համարը | Պաշարների կարգը | Պաշարների քանակը |
|-------------------|-----------------|--|
| N11 հորատանցք | A կարգ | 7.15 լ/վրկ կամ 0.618 հազ. մ ³ /օր |
| N12 հորատանցք | B կարգ | 0,59 լ/վրկ կամ 0,050 հազ. մ ³ /օր |
| N19 հորատանցք | B կարգ | 0,66 լ/վրկ կամ 0,50 հազ. մ ³ /օր |

Վեդու «Արարատ» ածխաթթվային ջրերի հանքավայրի հաշվեկշռային պաշարների մնացորդը վերոնշյալ 3 հորատանցքով A+B կարգերով կազմում են 8,39 լ/վրկ կամ 0,725 հազ. մ³/օր: Հանքային



ջրի հանքայնացումը կազմում է $2,5 \div 4,0$ գ/լ, քիմիական կազմը՝ հիդրոկարբոնատային-նատրիում-կալցումային է, ջերմաստիճանը՝ $18-21^{\circ}\text{C}$, լուծված CO_2 -ի պարունակությունը՝ $1,9 \div 2,0$ գ/լ:

Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է՝

- հանքային ջրի արդյունահանում շշալցման նպատակով N11 հորատանցքից 3,15լ/վրկ. և տեղափոխում գործող արտադրամաս:
- հանքային ջրի արդյունահանում շշալցման նպատակով N12 հորատանցքից 0,59 լ/վրկ. և տեղափոխում գործող արտադրամաս:
- N12 հորատանցի հորատերանհի սարքավորումների սխեմայի նախագծում:
- N12 հորատանցի կապտաժային շինության սխեմատիկ նախագծում:
- Ջուրը գործարան տեղափոխելու համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ընտրություն:

N11 և 12 հորատանցքերի ջրամատակարարումը կատարվում է հորատանցքերի արդյունաբերական հրապարակի (սանիտարական պահպանման գոտու) խմելու ջրով ապահովելու, տեխնոլոգիական սխեմայի սարքավորումների մաքրման, քլորացման, հատակների լվացման, արտադրական հրապարակի փոշենստման, ոռոգման նպատակով:

Խմելու ջուրը բերվում է B1-BLՎA-1.1 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով: Տեխնիկական պահանջների համար, մասնավորապես առաջնային մաքրման ազրեզատի համակարգից ֆիլտրերի, հատակների լվացման և քլորացման համար կիրառվելու է տեխնոլոգիական սխեմայի համակարգի ջուրը: Բաց հարթակների լվացման և ոռոգման համար օգտագործվելու է Բորտատարչուր գետի ջուրը:

Հորատանցքերի արտադրական տարածքում հոսքաջրերը բացակայում են՝ հետևաբար հատուկ ջրհեռացնող կառույցներ չեն նախատեսվում, բացառությամբ ֆիլտրերի մաքրումից, քլորացումից և հատակների լվացումից առաջացած տեխնիկական ջրերի հեռացման կոյուղու գծի, որը միացվում է սանիտարական գոտուց դուրս կառուցված կոյուղու կոլեկտորի հետ: Հորատանցքերի տարածքում թափվող մթնոլորտային տեղումները նույնպես կօգտագործվեն ոռոգման նպատակներով:

Խմելու ջրի ծախսը 1 մարդու համար ընդունվում է 25 և 16 լիտր օրական, իսկ տեխնիկական ջրի ծախսը հաշվարկվում է հատակների լվացման, տարածքի ոռոգման, ֆիլտրերի մաքրման ու քլորացման համապատասխան նորմաների հիման վրա:

Հաշվի առնելով Վեդու «Արարատ» հանքային ածխաթթվային հանքավայրի թիվ 11, 12 հորատանցքերի հանքային ջրերի քիմիական կազմը և ելքը առաջարկվում է նախագծով ընտրել Chriwa ֆիրմայի տեխնոլոգիական սարքերը և սարքավորումները, որոնք լայն կիրառում են ստացել հանքային ջրերի հանքավայրերում և համապատասխանում են Եվրոխորհրդի տարածքում գործող մեքենայաշինությանը, նշահարմանը և սարքերի անվտանգությանը ներկայացվող դիրեկտիվաներին:

Քանի, որ ածխաթթվային հանքային ջրերը ազրեսիվ են, նախատեսվում է մինչև շահագործումը № 11 և 12 հորատանցքերի 0-110մ միջակայք իջեցնել ANSI 304 մակնիշի 100մմ տրամագծով և 5մմ հաստությամբ հակակոռոզիոն սննդային խողովակաշար, որի գլխամասային հանգույցը իրենից ներկայացնում է 125մմ տրամագծով հատուկ կցորդ CO_2 -զազանջատիչին միանալու համար:

№ 11 և 12 հորատանցքերից CO_2 պարունակող արտամղվող ելակետային ջուրը անցնում է հետևյալ նախապատրաստման աստիճաններ՝

1. CO_2 – ի զազանջատում:
2. Հորատացքի ջրի օդահագեցում:
3. Երկաթի պարունակությունից մաքրում:
4. Երկաթազատման ֆիլտրով անցնում՝ մանգանի մասնակի հեռացմամբ:
5. Տարողությունները և պոմպային կայան ախտահանում քլորով:

N11 և 12 հորատանցքերից խողովակաշարի CO_2 պարունակող ջուրը կոռոզիայի չենթարկվող պողպատե խողովակով լցվում է CO_2 զազանջանիտիչ, որտեղ ցրող գլխիկի միջոցով հավելյալ CO_2 -ը անջատվում է օդային կափույրով և հետո ներքաշող խողովակով ու տանիքով արտանետվում է մթնոլորտ:

Հորատանցքերի վերգետնյա սարքավորումները և ջրի նախապատրաստման ազրեզատները մաքսիմալ մեքենայացված է և ավտոմատացված, որը նվազեցնում է ձեռքի աշխատանքի կիրառումը:



Նախատեսված են առաջնահերթ միջոցառումներ, որոնք վերաբերվում են Վեդու հանքավայրի լեռնասանիտարական պահպանմանը՝

1. Անհրաժեշտ է կառուցել կապտաժային շինություններ № 11 և 12 հորատանցքերի վրա, հիմքի և հատակի ապահով մեկուսացմամբ՝ մակերևութային աղտոտված ջրերի ներթափանցումից խուսափելու նպատակով :
2. Հաշվի առնելով սելավային հոսքերի առաջացման հնարավորությունը հորդառատ անձրևների ժամանակ անհրաժեշտ է՝ ա) N11 և 12 հորատանցքերի վրա կառուցել հենապատ մինչև 1մ բարձրությամբ, բ) Բորոտաղբյուր կիրճի ուղղությամբ դեպի հյուսիս N 11 հորատանցքից ստեղծել հակասելավային կառույցների համակարգ՝ հոսքերի ուժը նվազեցնելու համար :

Առաջին սանիտարական գոտին ցանկապատվում է ամողջ մակերեսի սահմաններով՝ կողմնակի ներխուժումներից խուսափելու նպատակով:

Ներկայացված գնահատման հաշվետվությունում ներառված է նաև հանքի փակման ծրագիրը:

Հանքավայրի շահագործման արդյունքների ավարտին կուենանք սանիտարական պահպանման գոտում հետևյալ խախտված հողատարածքները:

1. Թիվ 11 և 12 հորատանցքերի կապտաժային շինությունների տարածքը – 21,32մ:
2. Թիվ 11 և 12 հորատանցքերի գազանջատիչների զբաղեցրաց տարածքը – 10մ
3. Թիվ 11 և 12 հորատանցքերի սանիտարական պահպանման գոտիների սպասարկող ճանապարհը–30մ: Ընդամենը 0,01 հա: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված է 100հազ. դրամ:

Հանքավայրի փակման ընթացքում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ հորատանցքերի վերգետնյա սարքավորումների ապամոնտաժում, հորատանցքերի հորատքերանի փակում և կապարակնքում, տարածքների վերականգնում, թիվ 11 և 12 հորատանցքերի գազանջատիչների ապամոնտաժում, սանիտարական պահպանման գոտում սպասարկող ճանապարհների տարածքների խախտված հողերի վերականգնում, փակումից հետո մոնիթորինգի իրականացում:

Հանքավայրի փակումից հետո հետագա 5 տարիների ընթացքում մինչև շրջակա միջավայրի բաղադրիչների կայունացումը նախատեսվում է տարեկան մեկ անգամ իրականացնել հորատանցքերի և սանիտարական պահպանման գոտու շրջակա միջավայրի մոնիթորինգ՝ կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության գնահատման համար:

Հաշվի առնելով հանքավայրի և շրջակա միջավայրի երկաբանական և հիդրոերկրաբանական պայմանները, մշտադիտարկումների իրականացումը կարելի է սահմանափակել սանիտարական գոտու սահմաններով: Մշտադիտարկումների իրականացման դիտակետերը նախատեսվում է տեղադրել թիվ 11 և 12 հորատանցքերի կապտաժային շինություններում և սանիտարական պահպանման գոտու տարածքի եզրագծի ծայրամասերում: Մշտադիտարկումների իրականացման պարբերականությունը տարեկան 1 անգամ, 5 տարի տևողությամբ՝ մինչև շրջակա միջավայրի բաղադրիչների ցուցանիշների կայունացումը: Մշտադիտարկումների ձևը՝ տեղազնություն:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում, պարբերաբար հանդիպելու Դաշտաբար համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանքային քննարկումներ ՀՀ Արարատի մարզի Դաշտաբար համայնքում, որոնց ընթացքում տեղական



ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

- Հանքային ջրի շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) մոնիթորինգ:

- Նախատեսվող աշխատանքների ընթացքում առաջացած շինադրի կուտակումն և հեռացումն (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ավշար ջուր» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի «Արարատ» անխաթոթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 11 և 12 հորատանցքներից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնայան